

ժէք չի տալիս դեղարուեստական գրականութեան: Եթէ նրանից հարցնէք, թէ ի՞նչպիսի նիւթեր պէտք է մատակարարել մանուկին օտար լեզուից, նա առանց տատանելու կը պատասխանէ, տուէք խօսակցական լեզու, մանկական զուարճալի սրտաշարժ (շին ուլի) մանրապատումներ: Քայց ուղիղ է այս դատողութիւնը:

ՇԱՐԼԱՆԱԿԵԼԻ

Ս. Մանդինեան



Ե Ր Կ Ո Ւ Ե Ղ Բ Ա Յ Ր

Դպրոցական Կեանքից (Հ. Էսելբախ)

(Вѣстникъ Воспитанія № 8)

Բ. քաղաքի բանւորական թաղի, ամենամեծ դպրոցների մէկից, ժամը երեքին աշակերտներին արգէն արձակել էին, որոնք ուրախ ու գուարթ աղաղակներով ցրուեցին փողոցի այս ու այն կողմը:

Այդ օրը նշանակուած էր մանկավարժական ժողով: Փոշու մէջ ծածկուած յարգալից արագիւն, ուրիշ դպրոցական առարկաների հետ՝ դրուած էր ուսուցչանոցի պահարանի վրայ և իր բարձրութիւնից առանձին հպարտութեամբ նայում էր վեց երկար նստարանների վրայ նստոտած պ. վերատեսչին և ուսուցիչներին:

Քննելու էր առաջարկուած մի բաւական լուրջ հանգամանք: Եօթ և ութ տարեկան երկու հարազատ եղբայր, երկուսն էլ ստորին դասարանի աշակերտներից, իրանց վարք ու բարքով, նիստ ու կացով մեծ շիտթութիւն և յուզմունք էին ձգել ընկերների մէջ. դրա համար էլ անհրաժեշտ էր, և վերջապէս պէտք էր, վճռողական միջոցներ ձեռք առնուէին, թէ ի՞նչպիսի յարաբերութիւն են ունենալու նրանց հետ:

Ամենից առաջ կարգացուեց նախկին ժողովի արձանագրութիւնը, որ և ստորագրեցին բոլորը: Յետոյ պ. վերատեսուչը հաղորդեց ուսուցիչներին շրջանային Պ. տեսչի մի քանի նոր կարգադրութիւնները և խնդրեց իր կողմից, որչափ հնարաւոր է, դպրոցում հսկել կարգապահութեան վրայ. իսկ որպէս վերջաբան յայտնեց արգէն նշակուած ծննդեան արձակուրդի

սիւղը և վերջը: Ապա մի քանի անգամ ձեռներով արագ արագ կտրելի բերելով դիւնի մագերը, որ կտտարում էր չափազանց զրդռուած լինելիս:

— Ես այժմս վերադառնում եմ ներկայ խորհրդակցութեան գլխաւոր խնդրին, ասաց նա:

Հարցը պատում է երկու աշակերտների՝ Պետրոս և Յոյնիկի Մերկերի շուրջը, Պ. Կեննիդորֆի դասարանից... Արդեօք ձեզ հետ բերել էք աշակերտների վարք ու բարքի թերթը Պ. Կեննիդորֆի:

— Այո՛, այ. Վերատեսուչ. ահա և...:

— Ինչպէս այս վկայագրից երևում է երկու եղբայրներն արդէն մօտ վեց շաբաթ կը լինի, դպրոց չեն յաճախում և թափառում են նրա շուրս կողմը. և երբ ընկերներից մէկը կամ միւսը յայտնում է, թէ նրանց չարութիւնները, բացակայ դասերի թիւը արձանագրում են ցուցակի մէջ և թէ մինչև անգամ այսպիսի նկատողութիւնով «Ներդաստիքեան արժանի չեն», նրանք ուշուշեց են տալիս և յարձակում են ընկերների վրայ: Ինձ նոյնպէս յայտնեցին, թէ նրանք պատահել են իրանց դասագրքերը... բացի դրանցից աւելի լուրջ գանգատներ են հասել ինձ: Նրանցից մեծ եղբայրը ինչպէս է նրա տնունը, Պ. Կեննիդորֆի:

— Պետրոս Մերկ:

— Ինձ այնպէս է թւում, որ հէնց այդ մեծ եղբայրն է ամեն բանի բուն պատճառը, ես կարծում եմ բոլորը նրա խելքի ծնունդն է: Իրանց հարադատ մօր ասելով ահա վեց շաբաթ կը լինի, որ գիշերներն էլ տուն չեն գալիս:

Ուսուցիչներն մէջ արտայայտուեց խուլ տրտուելով:

— Այդ արդէն անհանդուրժելի է, նկատեց Շուլցէն:

— Բոլորովին ուղիղ է, պարոններ. իսկ այդ ամենը, որոնց հետ անհնար է հաշտուել, քանզում, հիմնադատակ են անում դպրոցական կարգապահութիւնը: Ընկերներից մինը փորձել էր փոքրին բռնի դպրոց բերել. նոյն բոսիկին մեծ — անամօթը իսկոյն կտրել է բռնողի գլուխը: Երկուսն էլ ծխում են. այդ դեռ ամենը չէ երբ նրանք խանութների առաջներից անցնում են, շարուած նարինջներին, խնձորներին, կըր հացերին ձեռք են մեկնում և... և դողանում են մի խօսքով անում են այն ամենը, ինչ որ խելքներին փշոււմ է: Իսկ թէ գիշերներն ո՛ւր են անցկացնում, Աստուած միայն գիտէ:

Մօտ օրերս գիշերապահը նրանց տեսել էր տան առաջի մայթի սանդուխի աստիճանների վրայ պառկած. այդ ժամա-

նակ նրանք իրանց անունները կեղծում են ու ասում, թէ իրանք որը են. իսկ երբ գիշերապահը խղճալով նրանց տանում է մօտակայ որբանոց և հէնց նոր սկսում է զանգահարել, որ դուռը բանան, տեսնում է, որ մօտը ոչոք չկայ:

— Իսկ այդ նման է որ և իցէ արկածի, վերաբերէց Պետերսը:

— Յաւելով պիտի ասել, այո: Սկզբում այդ աշակերտների հայրը ուշացած ու բաց թողած գասերի համար նշանակուած տուգանքը վճարում էր, իսկ վերջերում միշտ էլ պահանջած ժամանակին բանտ էր նստում:

Նրա կինը յայտնի է, թէ իր ամուսինը հարբող, ծոյլ մարդ է. ամենեին հող չի տանում ոչ իր և ոչ էլ զաւակների համար և թէ վաղուց է որ իրան նոյն իսկ տանից դուրս է արել: Դատարանը հարկաւ նրան ենթարկում էր պատասխանատուութեան, բայց նա էլ ասում էր, թէ երեխաները իմը չեն: «Ես շատ անգամ եմ ներկայացել պ. վերատեսչին այդ անկարգութիւնների պատճառով, որը ինձ մըշտ էլ խորհուրդ էր տալիս ձեռք առնել ամենախիստ միջոցներ վերջ տալու այդ . . . այդ խայտառակութեանը»: Ոստիկանը երեք անգամ երեխաներին բռնել և ստիպմամբ դպրոց էր բերել. իսկ այդ երեւոյթը ամեն անգամ պատճառ է դարձել մարդկանց ուշադրութիւնը գրաւելու և դպրոցի առաջը հաւաքուելու. իսկ մեզ ամենիս պարզ է, որ ժողովուրդը միշտ էլ ոստիկանի հակառակ կողմն է եղել:

— Ի հարկէ այդ ամենիս էլ արդէն յայտնի է, բացահանչեց Շուլցէն նայելով ժամացոյցին, որովհետեւ նա արուեստագիտական միութեան դպրոցում դեռ մի դաս էլ ունէր:

Վերջին անգամ ինչպէս կարգն էր ոստիկանը երեխաներին մի լաւ ծեծել էր. ես էլ բոլոր դատարանի առաջ խիստ յանգիմանութիւն կարգացի նրանց, ցոյց տալով նրանց վրայ որպէս վատ վարքի տէր երեխաների. երեւակայեցէք նրանք էլ ուրախութեամբ ընկերների առաջ, հրապարակապէս խոստացան ուղղուել:

— Իսկ այս ամենի հետեանքը ինչ պէտք է լինի: Ի՞նչ էք կարծում: Իրանից յետոյ դասամիջոցին, ուղիղ ժամը տասին՝ նրանք թաք կացան և ի՞նչ, դարձեալ անյայտացան. մինչև հիմա էլ նրանց գանել չաջողուեց ոչ ծառային և ոչ էլ ոստիկանին. թէ նրանք ո՞ւր են թաղիստում, այդ Աստուած գիտէ:

Այս գիշեր նրանք կը գիշերեն որեւիցէ երկայն սայլի վրայ, վաղը գոմում. հէնց երէկ այն բուրդ—բորան եղանակին, ինչպէս է պատահել նրանք կրկին գիշերել են սայլի վրայ և կամ կա-

մուրջի տակ. ինչպէս ասում եմ, նրանց գանել անհնարին է:

— Յամենայն դէպս այդ ամենը թոյլատրուած սահմանից անցնում է, ասաց Ֆինկելը, որը արձանագրում էր ժողովի արձանագրութիւնը, թանաքամանը կամացուկ մի կողմ հեռացնելով:

Ամենավաղը այն է, որ մնացած աշակերտներն էլ առանց խղճահարուելու գրգռւում են, շարունակեց պ. վերատեսուչը:

Երկու եղբայրները գողանում են այն ամենը, ինչ որ ձեռներն է ընկնում. մի խօսքով բառի բուն նշանակութեամբ սրիկաներ են: Միայն Արարչին է յայտնի, թէ ինչ է լինելու դրանց վերջը. մինչև այսօր նրանց ձեռքից ոչ մի բան չէ պրծել:

Ահա այսպէս, պարոններ: Ձեզ յայտնի է, որ ես ծեծի երկրպագուներից չեմ. մինչև անգամ այդ մտքից շատ հեռու, բայց ներկայ պարագայում մարդասիրութեամբ ոչինչ չեմ կարող տեսել: Իմ կարծիքով այս դէպքում յարմար կըլինէր մի քան ծեծել, իհարկէ այդ չի ուղղիլ երեխաներին, դրա հակառակ մնացած աշակերտների վրայ խիստ քաւ տպաւորութիւն կը թողնէ՝ կազդէր:

— Բոլորովին արդարացի է. — Առանց դրան էլ այդ անպիտան երեխաները ուղղիչ տան թեկնածուներ են:

— Հէնց այս րոպէին ինձ ներկայացաւ դպրոցի ծեր ծառան և յայտնեց որ պատահմամբ իմացել է, թէ վերջին գիշերը որտեղ են գիշերել. նա իմ սենեակում սպասում է մեր հրամանին. պ. Վերբել բարի եղէք կանչել ծառային այստեղ:

Վերատեսուչը իր ղեկուցման ժամանակ մինչև անգամ բարկացաւ և ծառայի ներս մտնելուն սպասելով, ջղային ու դողդոջուն ձեռներով սեղանի վրայ կուտակուած ցուցակներն էր թերթում:

Վերջապէս ծառան ներս մտաւ: Դա մի առոյգ ու ժիր ծերուկ էր՝ բոլորովին սպիտակ բեխերով: Աչքերի տակը անհամար կնճիռներով: Եթէ նոյն իսկ հագած էլ չլինէր իր ճերմակ, խնամքով լուացուած տարազը, դարձեայ հէնց առաջին անգամից պէտք էր ընդունել, որ նա ծառայած ղեկուորական էր: Ներկայ րոպէին նա հպարտանում էր իր ապագայ յաղթութիւնը գուշակելով:

— Պ. Բեխտեր, գուք սուբմն կարծում էք, որ վաղը կարող էք Մերկերին բռնել:

Անպայման պ. Վերատեսուչ:

— Եթէ այդպէս է, ես ձեզ խնդրում եմ. վաղը շուտով գնացէք նրանց գիշերած տեղը և այսպէս թէ այնպէս նրանց դպրոց բերէք և եթէ կարելի կըղգաք, կարողէք նոյն իսկ ստանկանի օգնութեանը դիմել և կամ ձեռները կապել: Ճանա-

յուլիսեամբ պիտի ստորագրեն և մանաւանդ պէտք է ուղղուելու հրապարակական փառաւոր խոստումը տան... Հէնց այդ արձանագրութեան մէջ պէտք է դուրս բերել, որ եթէ նրանք շարունակեն այդպիսի թափառաշրջիկ կեանք, այն ժամանակ նրանց կըտրուի արձակման վկայագիրը:

Յուսով եմ, որ դուք, պարոններ, դրա դէմ ոչինչ չունիք: — Խօսք եմ խնդրում:

Բոլորի աչքերը սեւեռուեցին աշակերտների դատարարակէլ վրայ, որը բարիութիւնից ջղային ձեւերով շփում էր սեղանի կանաչ մահուդը:

— Դէ շուտ արե՛ք, վերջացնենք. շտապեցնում էին մի քանի ուսուցիչներ:

— Խնդրեմ, Պ. Կենիգսդորֆ:

Վերատեսուչը սեղանից բաղկաթոռը յետ-յետ քաշելով, հրկարացրած ոտները իրար վերայ դնելով, դուրս մի կողմ թեքած ընկաւ իր եղունգների զննութեան յետեից, իբր իսկական նշան, թէ աւելի է հետաքրքրւում եղած հարցերով:

— Մենք բոլորս Պ. Վերատեսչի հետ համաձայն ենք, ասաց Կենիգսդորֆը, որ հարցը շատ լուրջ է, իսկ ես լինելով նրանց դատարանական դատարարակը, ամեն տեսակ միջոց ձեռք կառնեմ. ապացոյց դորան, որ արդէն իսկ աշխատել եմ և որչափ հնարաւորութիւն եմ ունեցել, հաւաքել եմ նրանց մասին ամենաանհրաժեշտ տեղեկութիւնները: Գալով նրանց տարիքին՝ ինձ թոյլ եմ տալիս պնդելու, որ նրանք եօթ և ութ տարուց մի քիչ աւել են: Իսկ ինչ վերաբերում է նրանց անձնականին, իմ խորին համոզմունքն է, որ բնութիւնից ամենակին նրանք փչացած չեն. ներկայումս էլ նրանք այնքան վատ չեն, ինչպէ՞ս մեզ այդ երեւում է առաջին հայեացքից:

— Բաւական է, բաւական. ծիծաղելին նրա ընկերները:

— Պարոններ, խնդրում եմ չը՛նդհատէք: Շարունակեցէք Պ. Կենիգսդորֆ:

Անկասկած երեխաները թունաւորուած են օձերից, եթէ կարելի է այդպէս արտայայտել. ներկայումս նրանք թողնուած են առանց խնամքի, բաղդի բերմունքին, վրաները ոչ մի հրկող չունին. իսկ այդ ամենը թողնում են շատ վատ և անախորժ տպաւորութիւն: Նրանք համարելով իրանց պաշարուած դրութեան մէջ՝ դործում են իրանց վիճակին համապատասխան: Երբ առաջին անգամ, բռնի, ստիպմամբ նրանց դպրոցից ներս մտցրին, ես նրանց նկատողութիւն արի այդ տգեղ վարմունքի համար, իսկ երկրորդ անգամ պատժեցի, որի համար այժմ սաստիկ ցաւում եմ:

յուլիսեամբ պիտի ստորագրեն և մանաւանդ պէտք է ուղղուելու հրապարակական փառաւոր խոստումը տան... Հէնց այդ արձանագրութեան մէջ պէտք է դուրս բերել, որ եթէ նրանք շարունակեն այդպիսի թափառաշրջիկ կեանք, այն ժամանակ նրանց կըտրուի արձակման վկայագիրը:

Յուսով եմ, որ դուք, պարոններ, դրա դէմ ոչինչ չունիք: — Խօսք եմ խնդրում:

Բոլորի աչքերը սեւեռուեցին աշակերտների դատարարակէլ վրայ, որը բարիութիւնից ջղային ձեւերով շփում էր սեղանի կանաչ մահուդը:

— Դէ շուտ արե՛ք, վերջացնենք. շտապեցնում էին մի քանի ուսուցիչներ:

— Խնդրեմ, Պ. Կենիգսդորֆ:

Վերատեսուչը սեղանից բաղկաթոռը յետ-յետ քաշելով, հրկարացրած ոտները իրար վերայ դնելով, դուրս մի կողմ թեքած ընկաւ իր եղունգների զննութեան յետեից, իբր իսկական նշան, թէ աւելի է հետաքրքրւում եղած հարցերով:

— Մենք բոլորս Պ. Վերատեսչի հետ համաձայն ենք, ասաց Կենիգսդորֆը, որ հարցը շատ լուրջ է, իսկ ես լինելով նրանց դատարանական դատարարակը, ամեն տեսակ միջոց ձեռք կառնեմ. ապացոյց դորան, որ արդէն իսկ աշխատել եմ և որչափ հնարաւորութիւն եմ ունեցել, հաւաքել եմ նրանց մասին ամենաանհրաժեշտ տեղեկութիւնները: Գալով նրանց տարիքին՝ ինձ թոյլ եմ տալիս պնդելու, որ նրանք եօթ և ութ տարուց մի քիչ աւել են: Իսկ ինչ վերաբերում է նրանց անձնականին, իմ խորին համոզմունքն է, որ բնութիւնից ամենակն նրանք փչացած չեն. ներկայումս էլ նրանք այնքան վատ չեն, ինչպէ՞ս մեզ այդ երեւում է առաջին հայեացքից:

— Բաւական է, բաւական. ծիծաղելին նրա ընկերները:

— Պարոններ, խնդրում եմ չընդհատէք: Շարունակեցէք Պ. Կենիգսդորֆ:

Անկասկած երեխաները թունաւորուած են օձերից, եթէ կարելի է այդպէս արտայայտել. ներկայումս նրանք թողնուած են առանց խնամքի, բաղդի բերմունքին, վրաները ոչ մի հրկող չունին. իսկ այդ ամենը թողնում են շատ վատ և անախորժ տպաւորութիւն: Նրանք համարելով իրանց պաշարուած դրութեան մէջ՝ դործում են իրանց վիճակին համապատասխան: Երբ առաջին անգամ, բռնի, ստիպմամբ նրանց դպրոցից ներս մտցրին, ես նրանց նկատողութիւն արի այդ տգեղ վարմունքի համար, իսկ երկրորդ անգամ պատժեցի, որի համար այժմ սաստիկ ցաւում եմ:

Վերջին անգամ դպրոցի ծառան համարձակուել էր նրանց խիստ ծեծել ու այդպէս վերջնականապէս նրանց վախեցրել:

— Բայց, ամենասիրելի Պ. Կենիդսդորֆ, մենք խօսմ չենք կարող այդպիսի աշակերտներին վարձատրել թափառաշրջիկութեան համար, նկատեց Պ. Վերատեսուչը որտի դառնութեամբ:

— Հասկանալի է, ս'չ. սակայն պատժի արժանի են ս'չ թէ երեխաները, այլ նրանց ծնողները, աւելի ուզելոյն ասած՝ մայրը: Եթէ հաւաքած տեղեկութիւններս ճիշտ են, այն ժամանակ անպայման դիմաւոր մեղաւորը մայրն է:

— Մի՛ թէ

— Այո՛, ցաւելով պէտքէ շեշտել, որ մայրն է: Ես կարողացել եմ նրանց չարութեան արմատը քննել: Երեխաների այժմեան ծնողները, տասներկու տարի առաջ, որպէս մի զոյգ ամուսիններ՝ մանուկ են օրինական ամուսնութեան մէջ: Ամբողջ տասներկու տարուայ ընթացքում իրար հետ ապրել են հաշտ, սիրով և համաձայն: Միայն երկու ամիս է, որ յանկարծակի փոխուեցին. նրանք ունեցել են վեց դուստկ, որոնցից միայն երկուսն են կենդանի մնացել և ինչպէս երեւում է շատ էլ աղքատ են: Մարդը արհեստով ներկարար է. և երբ նա աշխատանք էր ունենում՝ առաւօտեան ժամը չորսին գործի էր գնում:

Վերջերումս նրանց մօտ գնում դալիս էր մի բեռնակիր, առաջին տեսակի սրիկաներից մէկը: Երեխաները իրանց յատուկ մանկական անմեղութեամբ բոլոր տեսածները պատմում են հօրը, թէպէտև իրանց հասակին անհասկանալի բաների մասին, որոնք մարդուն այլևս ոչ մի կատկածանքի մէջ չէին թողնում, թէ կինը իրան խաբում է և անհաւատարիմ է և շատ հաւանական է, որ այդ տմենի համար մարդ և կին միշտ էլ ունեցել են ազմիպի ու անախորժ խօսակցութիւններ: Այդ երեւում է հէնց նրանից, որ երբ մի երեկոյ մարդը աշխատանքից տուն է վերադառնում, տեսնում է կինը տանը չէ. կինը տան կահարասիքից շատերը ծախել է ու տեղափոխուել բեռնակրի տեսակը, որը գտնուում էր ուրիշի բնակարանի վերնայարկում:

— Այո՛, այո՛. հիմա տեսէք, թէ ինչ են նշանակում քաղաքի բարքերը ու ծանր հառաչեց Պ. Վերատեսուչը:

— Եւ այն Մերկն էլ, օրը համարւում էր չըհարբող, աշխատաւոր քան որ՝ այժմս դառել է հարբեցող, իսկ երեխաները գիշերում են որանդ կըպտահի—բաց երկնքի տակ՝ քաղցած, ծաւաւ և արատաւելով քաւում են իրանց մօր իտիպական մեղքերը: Նս կրկին կաշխատեմ հէնց այսօր տեսնուել երեխաների հօր հետ՝ խօսելու և մանրամասնօրէն տեղեկութիւններ հաւաքելու համար, այդ թշուառ ու անբաղդ ընտանիքի վերաբերմամբ:

— Ինձ թւում է, որ այդ պատմութիւնը չափազանցապարծ է, ասաց Նուլլէն: Ամեն ասածի հաւատ ընծայել չի կարելի: անբարեխիղճ մարդիկ միշտ էլ ընդունակ են կեղծելու և շատ անգամ պոչաւոր ստեր են ստեղծում:

Զգուշացէք բոլրի կենդիւնը, չըլինի թէ ձեր դիւրահաւանութեան համար պատժուէք: «Ով կընկնի մօր, իբրոք ատի»: —

— Բայց մենք խօսում ենք երեխաների մասին...

— Պէտք է ամեն բան թողնել ստախկանութեանը...

— Բանի որ ուշ չէ:

— Աւերջապէս, իւրաքանչիւրն իր գիտցածի պէս է գործում: Իսկ ինչ վերաբերում է ինձ, ձեր խոնարհ ծառային, ես հաւատով պատմութիւն չեմ ունի անել:

— Պ. Կենդիւնը, յիշեցրեց Պ. Աւերատեսուչը, դուք ուղում էիք երեխաների մասին խօսել:

— Եթէ նայն իսկ հարկաւոր էլ լինէր բռնել երեխաներին ու գպրոց բերել ես կարծում եմ ներկայ պարագաներում անարգարացի կըլինէր նրանց պատժել: Բանի որ գործի բոլոր փաստացի կողմերը վերջնականապէս պարզուած չեն: Մարդ ու կին փոխադարձ սրբար իրար վրայ դանդաղում են. երեխաների կողմն էլ մեղաւոր են. իսկ գալով ազաներին՝ չափաք է թող տալ, որ մինչև ոսկորները փշանան. պէտք է բարութեամբ ազդել նրանց հոգիները վրայ. անարժան և անպատեղի ներողամտութիւնը աւելի խորը կազդէ, քան թէ ամենախիստ պատիժը:

— Իսկ դուք ի՞նչ կարծիքի էք պարսններ, Պ. Կենդիւնը: Նոր առաջարկութեան վերաբերմամբ, հարցրեց Պ. Աւերատեսուչը:

— Պ. Կենդիւնը բաւական անծանօթ է մեր քաղաքի բարքերի հետ, նկատեց պ. Նուլլէն: Մենք այդ դանդաղութեան բաժանի համը վաղուց ենք աւել. մենք չենք կարող իրերի վերայ այդպէս թեթեւ աչքով նայել:

— Յոմեանայն դէպք կարելի է փորձել...

— Իսկ եթէ այդ է՞լ չաջողուի:

— Իհաւ ապագայի համար մենք աւելի ուժեղ միջոցներ ունինք Պ. Աւերատեսուչ. բայց ես հաւատում եմ, որ մեզ պիտի յաջողուի:

— Ուրեմն, այդ բանում դուք հաւատացած է՞ք, պաշտօնակից:

— Առայժէք խնդրեմ, իսկ քանի տարի է, որ պաշտօն էք վարում, հարցրեց Նուլլէն, փոքր ինչ ծաղրական ձևով:

— Դուք կարծում էք, որ փորձառութեան համար հինգ տարին բաւական չէ, Պ. Շուլցէ. բացի դրանից՝ մինչև իմ այստեղ գալը և պաշտօն ստանձնելը, ես մի ամբողջ տարի վարում էի դաստիարակչի օգնականի պաշտօն ուղղիչ հիմնարկութեան մէջ. ամեն անգամ և աւելի դժուար դէպքերում ես միշտ էլ ունեցել եմ ցանկալի յաջողութիւն ներդրումս քեանք և ո՛չ թէ խոստրեամբ:

Սկսուեց ընդհանուր տար փնտրանութիւն: Վերջապէս Պ. Վերաաւետուչը յայանեց, թէ ինքը ընդունում է, որ պ. Կենիգսդորֆը, ինչպէս երեխաների դաստիարակ, նրանց բնաւորութիւնը աւելի լաւ է ուսումնասիրել, դրա համար էլ սպառազօյի միջոցները լիակատար համոզմամբ կը թողնէ նրա ազատ հայեցողութեանը: Երկտասարդ ուսուցիչը շնորհակալութիւն յայտնեց. իսկ Ժողովը փակուեց:

Դպրոցից ամենից առաջ գուրս եկաւ Կենիգսդորֆը: Նրա գէմբը բոլորովին կարմրել էր, ինչպէս կարմիր տակ. և շնայելով դրոշի սաստիկ ստունամանիքին, այնուամենայնիւ նա վերարկուն կոճկելը մոռացաւ: Նրա պաշտօնակից ընկերները դեռ ևս մի քանի բոպէ էլ սպասեցին դպրոցի դռան առջևը գլանակները ծխելու համար:

— Իսկ այդ Կենիգսդորֆ, ասաց Շուլցէն ուսերը շարժելով... և նայելով հեռացող ընկերի յետևից... և շրթունքների վերայ երևացին հազար ու մի ծամածռութեան կեղծ ժպիտներ:

Բոլոր ժամանակը լուռ ու մունջ նգորկը երեք լուցիկի փչացնելով և հազիւ վերջին լուցիկիով գլանակը վառելով. . .

— Կենիգսդորֆը մի պատուական երկտասարդ է, վերջապէս վրաբերեց նա. հետն էլ անյաջող փորձեր անելով, որ կարողանայ ուրեւէ կարճ բէխերը, որոնք միշտ էլ բերանն էին մանում. իսկ դուք այդ մասին ի՞նչ կասէք Պետերս, դառնալով իր կատկածոտ ընկերին:

Պետերսը շատ էլ շուտ ըմբռնողներէից չէր. «Ժառանջութեամբ քորելով աղանջների տակը՝ ասաց. «Ես ի՞նչ կարող եմ տեսլ: Դեռ երկու տարի չկայ, որ նա քաղաքումն է. . . » և բարձրացնելով գլուխը սովորականի համեմատ օդը քթից այնպէս ներս քաշեց, կարծես թէ թունդ հարբուխ ընկած լինէր:

— Իսկ մենք շատ տարիներ առաջ չէինք էլ համարձակուում այդպէս դատել, ասաց Խինկելը սրբելով աղնոցները, «մշտական վերաաւետչի օգնականի թեկնածուն», որին հանաքով ընկերները այդպէս էին անուանում. իսկապէս հէնց ինքն էլ ներկայացնում էր բաւական ծիծաղելի մի տիպ:

—Երեսուն տարի առաջ ուսուցչական սեմինարիայում՝ մեզ որպէս հեղինակաւոր մարդկանց աւելի յարգանք էին ցոյց տալիս: Ինչո՞ւ հեռուն դնանք. հէնց ինձ վերցրէք. ես արդէն հինգ տարուայ ուսուցիչ էի, երբ մի անգամ դիւզից գուրս զբօսնում էի, սրտեղ և ծաւալում էի. յանկարծ ինձ պատահեց հէնց իմ նախկին տեսուչը: Ուսուցչական սեմինարիայում ծխելը խիտ արգելուած էր, իսկ ես երկար ծխափողը բերանիս ծխելով գնում էի. իմ մէջ այնպէս խոր արմատ էր ձգել յարգանքով վերաբերուել դէպի տեսուչը, որ ես տեսնելով, թէ՛ նա մօտենում է՝ երկար ծխափողը ձգեցի կալի մէջ:

—Գուք այդ ժամանակ կարող էիք խուրձերի մէջ հրացան էլ դատարկել, եթէ հրացան ունենայիք, նկատեց Շուլցէն, որը ընկերներէից ջուլետում էր նրանով, որ ամեն մինի հացէին ասում էր մի անախորժ սրախօտութիւն:

Այն ժամանակ ստանալով մօտաւորապէս իննհարիւր մարկ, ես չէի կարող հրացան ձեռք բերել, սկսեց հաւատադնել Խինկելը կարմրելով, և ամօթխածութեամբ ծիծաղեց:

—Քեզ համար հրացան ձեռք բեր, • երգելով պատասխանեց ծաղրածու Շտէրկը, գրպանը դնելով ծխախոտի արծաթե այկուր տմանը:

Յատուութիւն մինչև Երեկոյ... Կէդելախաղում: Խինկել, նայիր որ ժամանակին պոկ գաս կնոջիցդ...

Բոլորը քչքչացին: Խինկելը կամացուկ շուռ եկաւ: —Յատուութիւն, ասաց նա և շտապ շտապ՝ քայլերը մեծացնելով՝ փողոցից հեռացաւ ու թեթեւ կռանալով հանեց մի մեծ դանակ: Նա այնպէս ուղիղ էր գնում, ինչպէս փայտից շինած մարդ լինէր. իսկ ձեռները այնպէս էր շարժում, ասես երկու կողմից՝ օդն էր թիւփարում:

Մնացած ընկերները կրկին անգամ հառտատեցին, որ երեկոյեան բոլորը կը հանգիպեն Կէդելախաղում ու ապա շուտով ցրուեցին:

Շուլցէն նայելով գրպանի հայելու մէջ աշխատում էր խնամքով կարգի բերել ըէխերն ու մօրուքը և տեսնելով ելեւտրաքարը վեր թռաւ, որ մի գույշ արուեստագիտական գրպայոցի դասից յետ մնայ:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

Թարգ. ՆԵՐՍԻԱ ՎԱՐՊԱՅԵՏ

